ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՊԵԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 20 փետրվարի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար Դ. Լոքյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում քննեց «2007 թվականի հունվարի 17-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջեւ Արտադրական ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության եւ Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ) միջազգային զարգացման հիմնադրամի միջեւ Արտադրական ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի փոխառության համաձայնագրի նպատակը Հայաստանի գյուղական վայրերում գյուղատնտեսության եւ անասնապահական արտադրության արդյունավետության բարելավմանն ուղղված անհրաժեշտ ենթակառուցվածքների ծրագրային վերականգնումն է, որը բաղկացած է հետեւյալ բաղադրիչներից.

ա/ մասնավոր սեկտորի հետ համագործակցությամբ ոռոգման համակարգերի, ճանապարհների եւ կամուրջների, խմելու ջրի մատակարարման համակարգերի եւ բնական գազի մատակարարման ցանցերի շինարարություն,

բ/ ծրագրի կառավարում:

2. Վերոհիշյալ նպատակների իրականացման համար ՕՊԵԿ միջազգային զարգացման հիմնադրամը որպես փոխառություն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրում տասը միլիոն (10.000.000) ամերիկյան դոլար գումար՝ փոխառության դուրս գրված եւ օգտագործված գումարի 3 տոկոսի չափով տոկոսավճար եւ 1 տոկոսի չափով ծառայողական վճար վճարելու պայմանով: Փոխառության գումարը ենթակա է վերադարձման 30 կիսամյակային վճարումներով, այն ժամկետներում եւ համամասնությամբ, որոնք նախատեսված են համաձայնագրի թիվ 3 հավելվածում:

Փոխառության գումարի օգտագործման (դուրսգրման) եւ վերադարձման ընդհանուր պայմանները սահմանված են համաձայնագրի 2 հոդվածում:

Համաձայնագրի շրջանակներում ապրանքների ձեռքբերումը նախատեսված է իրականացնել 1982 թվականի նոյեմբերի 2-ին հաստատված՝ «ՕՊԵԿ հիմնադրամի տրամադրած փոխառությունների հաշվին ձեռքբերումների ուղեցույցին» համապատասխան:

Համաձայնագրի 4 հոդվածում նախատեսված է ՀՀ-ում ՕՊԵԿ միջազգային զարգացման հիմնադրամի կարգավիճակը, համաձայն որի՝ նրա ունեցվածքը ՀՀ տարածքում բռնագրավման, ազգայնացման կամ այլ եղանակով օտարման ենթակա չէ:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

- ծրագիրն իրականացնել պատշաճորեն եւ արդյունավետությամբ, վարչական, ֆինանսական եւ ինժեներական փորձառության համապատասխան՝ տրամադրելով անհրաժեշտ ֆոնդեր, կարողություններ, ծառայություններ ու այլ ռեսուրսներ,

- փոխառության միջոցների հաշվին ձեռք բերված բոլոր ապրանքներն ու ծառայություններն օգտագործել բացառապես ծրագրի նպատակների համար,

- համաձայնագիրը եւ Կողմերի միջեւ ցանկացած լրացուցիչ համաձայնություն ազատել հարկերից, գանձումներից կամ տուրքերից,

- փոխառության գումարի, տոկոսադրույքի եւ ծառայողական վճարի վճարումներն ազատել ամեն կարգի վճարումից եւ սահմանափակումից,

- ապահովագրել փոխառության միջոցների հաշվին ձեռք բերված յուրաքանչյուր ներմուծված ապրանք կամ համապատասխան միջոցներ ձեռնարկել դրանց ապահովագրման համար՝ ստացման, մատակարարման եւ օգտագործման կամ տեղադրման վայր փոխադրման ընթացքում հնարավոր պատահարներից,

- ՕՊԵԿ միջազգային զարգացման հիմնադրամին տրամադրել ծրագրի համար անհրաժեշտ նախագծերը, պայմանագրային փաստաթղթերը եւ շինարարության ու գնումների ժամանակացույցերը, դրանց ցանկացած փոփոխությունները կամ լրացումները,

- ծրագրի ավարտից անմիջապես հետո հիմնադրամին ներկայացնել ծրագրի իրականացման ու ելակետային գործողությունների, դրա արժեքի ու ստացած եւ ստացվելիք օգուտների մասին հաշվետվություն,

- անմիջապես տեղեկացնել հիմնադրամին ցանկացած պայմանի մասին, որը խոչընդոտում է կամ կարող է խոչընդոտել ծրագրի առաջընթացը, ինչպես նաեւ այլ պարտավորություններ, որոնք մանրամասնված են համաձայնագրի 3, 4, 5, 6 եւ 7 հոդվածներում:

4. Համաձայնագրում նախատեսված են դրույթներ պարտավորությունների խախտման դեպքում փոխառության գումարն արագացված մարելու, միջոցների հատկացումը կասեցնելու եւ դադարեցնելու վերաբերյալ: Համաձայնագրի բաղկացուցիչ մասն են կազմում թվով 3 հավելվածներ:

Կողմերի միջեւ հնարավոր վեճերի լուծման նպատակով համաձայնագրով նախատեսված է արբիտրաժային ընթացակարգ:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 9 հոդվածում ամրագրված սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2007 թվականի հունվարի 17-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջեւ Արտադրական ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 փետրվարի 2007 թվականի
ՍԴՈ-679